ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ես՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) ռիսկերի գնահատման, վերլուծության և վերահսկողության վարչության աշխատակից Աննա Սուրենի Հովսեփյանս, Ծառայության ռիսկերի գնահատման, վերլուծության և վերահսկողության վարչությունում որպես փորձագետ աշխատելու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Ծառայության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ոլորտների վերահսկողության վարչության, գնումների գործընթացների վերահսկողության վարչության, նամակների, դիմումների և քաղաքացիների ընդունելության վարչության կողմից ստացված գրությունների հիման վրա Ծառայությանը հասանելի շտեմարաններից տվյալների արտածում, ամփոփում և տրամադրում համապատասխան վարչություններին:
2. Ծառայության ռիսկերի գնահատման, վերլուծության և վերահսկողության վարչությանը հասցեագրված հանրագրերում բարձրացված խնդիրների ուսումնասիրություն, որոնց շրջանակներում Ծառայությանը հասանելի շտեմարաններից կատարել եմ տվյալների արտածում, ամփոփում, տարբեր գերատեսչական մարմիններին հարցումներ և պատասխանել դիմումատուների:
3. Ընդգրկված եմ եղել վարչության կողմից ուսումնասիրություններ և վերլուծություններ կատարող աշխատանքային խմբերում, որոնց արդյունքներն ամփոփվել և ներկայացվել են վարչության աշխատանքները համակարգող Ծառայության ղեկավարի տեղակալին:
4. Ծառայության ղեկավարի համապատասխան հանձնարարականով հաստատված պետական ոչ առևտրային կազմակերպությունների ռիսկայնության ցանկերի կազմում, Ծառայությանը հասանելի շտեմարաններից տվյալների արտածում և խմբավորում:
5. Անմիջական ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականների կատարում:

ՀՀ պետական վերահսկողական ռիսկերի գնահատման, վերլուծության և վերահսկողության վարչության
բաժնի փորձագետ՝ **Ա.Հովսեփյան**

«03» հոկտեմբերի 2022թ.